# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Ճամբարակ, Գ.Նժդեհի 125
Հեռ.՝ (0265)22255, էլ. փոստ՝ chambarak.gegharquniq@mta.gov.am

N 539
*15 սեպտեմբեր*
*2020թ.*

«ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱԳԱՀ
ՇՈՒՇԱՆ ԴՈՅԴՈՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 14.09..2020թ. N346-23 հարցման՝ հայտնում եմ, որ Ճամբարակ համայնքի Պ.Սևակի փողոցի 2/5 հասցեում գտնվող հողամասը (կադաստրային ծածկագիր՝ 05-002-0101-0005, մակերեսի չափը՝ 1,38949 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրի, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր), որի վրա կառուցված է մարզադաշտ՝ (Ֆուտբոլի, մինի ֆուտբոլի և բասկետբոլի դաշտեր) սեփականության իրավունքով պատկանում է Ճամբարակ համայնքին՝ վկայական N19042019-05-0037, իսկ հարակից Տիգրան Մեծ փողոցի 13-րդ և 15-րդ բազմաբնակարան շենքերի մոտ (կադաստրային ծածկագիր՝ 05-002-0101-, մակերեսի չափը՝ 0,08 հա, նպատակային նշանակությունը՝ բնակավայրի, գործառնական նշանակությունը՝ այլ հողեր) առկա տարածքը, որի վրա դեռևս 2001-2005թթ. ընթացքում ինքնակամ կառուցված է մանկական խաղահրապարակ նույնպես հանդիսանում է Ճամբարակ համայնքի սեփականությունը, չնայած սեփականության իրավունքը դեռևս գրանցված չէ, սակայն համաձայն ՀՀ հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 1-ին մասի «Համայնքների սեփականությանն են պատկանում տվյալ համայնքի սահմանագծի ներսում գտնվող հողերը, բացառությամբ պետությանը, քաղաքացիներին, իրավաբանական անձանց և սեփականության այլ սուբյեկտներին պատկանող հողերի»:

Այնքանով որքանով, որ նշված հողատարածը չի պատկանում պետությանը, քաղաքացիներին, իրավաբանական անձանց կամ սեփականության այլ սուբյեկտների, ուստի օրենքի ուժով այն հանդիսանում է Ճամբարակ համայնքի սեփականությունը: Ինչ վերաբերվում է նշված հողատարածքի վրա ինքնակամ կառուցված շինություն հանդիսացող խաղահրապարակի կառուցատարրերին, ապա ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնակամ կառույցի նկատմամբ ճանաչվում է պետության կամ համայնքի սեփականությունը, անկախ նրանից, թե ով է այն կառուցել», ուստի նույնպես օրենքի ուժով նշված խաղահրապարակի

կառուցատարրերը որպես հիմնական միջոց գույքագրվել և 01.01.2018թ. դրությամբ գրանցվել է համայնքին պատկանող շենք, շինությունների, տարածքների վերաբերյալ հիմնական միջոցների գրքում, որպես համայնքային գույք:

Առդիր՝ վկայականը և հիմնական միջոցների գրքի լուսապատճենը:

**Համայնքի ղեկավար՝** **Վազգեն Ադամյան**

*Կատ. Քաղաքաշինության բաժնի պետ՝ Ս. Ավալյան*
*026523133*